



**Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի Տարածքային Գրասենյակ**  
 Եվրահանձնաժողովի մարդասիրական օգնության վարչության  
 աղետներին պատրաստվածության ծրագիր  
 Կենտրոնական Ասիայի և Հարավային Կովկասի երկրներում 2010-2011 թթ.

## ՈՒՂԵՑՈՒՅՑ

### **ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ ԵՎ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԱՂԵՏՆԵՐԻՆ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՂԵՏՆԵՐԻ ՄԵՂՄԱՑՄԱՆ ԿԵՐԱԲԵՐՅԱԼ**

#### **Նպատակ**

Սույն փաստաթղթի հիմնական նպատակն է ուղեցույց դառնալ ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի տարածքային ներկայացուցչությունների այն աշխատակիցների համար, ովքեր զբաղվում են Եվրահանձնաժողովի մարդասիրական օգնության վարչության աղետներին պատրաստվածության ծրագրով (DIPECHO) Հարավային Կովկասում և Կենտրոնական Ասիայում: Մասնավորապես, այս ուղեցույցը նպատակ ունի ներկայացնելու դպրոցներում աղետներին պատրաստվածության և դրանց հետևանքների մեղմացման տարբեր տարրերը, ինչպես նաև փորձարկային դպրոցներում պատրաստվածության և մեղմացման աշխատանքների պլանավորումն ու կենսագործումը՝ Եվրահանձնաժողովի մարդասիրական օգնության վարչության աղետներին պատրաստվածության ծրագրի շրջանակներում: Այս երկու ենթատարածաշրջաններում ՄԱԿ-ի մանկական հիմնադրամը հաստատական է իրականացնել այնպիսի գործունեություն, որը կուժեղացնի ընտրված դպրոցներում աղետներին պատրաստվածության և դրանց մեղմացման կարողությունները: Այս միջամտությունների հիմքում ընկած ընդհանուր նպատակն է արդիականացնել պատրաստվածության մակարդակը՝ հասցնելով այն այնպիսի աստիճանի, որ առկա կարողությունների և համակարգերի գործադրմամբ դպրոցներն ի վիճակի լինեն կանխատեսել, պատրաստվել և արձագանքել հնարավոր աղետներին՝ կախված իրենց տեղային պայմաններից: Հարկ է նշել, որ գերակա նպատակն է ապահովել, որպեսզի այս դպրոցները որպես նմուշ ծառայեն:

#### **Համատեքստ**

Բնական վտանգները տխուր հետևանքներ ունեցող պատահական երևույթներ չեն: Բնական վտանգներն այնպիսի բնականոն իրադարձություններ են, որոնք սպառնալիք են ներկայացնում կյանքի, գույքի և այլ արժեքների համար: Աղետները կախված են տվյալ աշխարհագրական գոտում առկա եղանակային օրինաչափություններից կամ ֆիզիկական հատկանիշներից և հաճախ կարող են կանխատեսվել: Մենք պետք է ճանաչենք և հասկանանք մեր բնական միջավայրում առկա ռիսկերը և ողջամիտ և իրականացվելի կերպով նախապատրաստվենք դրանց, որպեսզի բնական վտանգները չդառնան բնական աղետներ կամ էլ առնվազն մեղմացնենք աղետների հետևանքները, եթե դրանք ի վերջո պատահեն:

Տարրական կրթությունը և աղետների կանխարգելումն ու պատրաստվածությունն իրարից անբաժան են: Ընտանիքները վստահում իրենց երեխաներին դպրոցներին, որպեսզի այնտեղ անցկացրած օրվա ընթացքում նրանք լինեն ապահովության մեջ: Միլիոնավոր ուսուցիչների, տնօրենների և կրթական այլ աշխատակազմի ջանքերի շնորհիվ՝ դպրոցները սովորաբար ապահով վայր են հանդիսանում երեխաների համար:

Յուրաքանչյուր դպրոցի անձնակազմն ու այնտեղ սովորող երեխաները պետք է գիտակցեն իրենց կյանքին սպառնացող վտանգները և պատրաստ լինեն համապատասխան քայլերի դիմել վերահաս և փաստացի վտանգի դեպքում: Ուսուցիչներն և այլ աշխատակիցները գիտեն, թե ինչպես պաշտպանել իրենց աշակերտներին արտակարգ իրավիճակի դեպքում և նրանց ապահով տուն վերադարձնել: Հանգստության և քառսի, խիզախության և վախի, կյանքի և մահվան միջև եղած տարբերությունը կարող է պայմանավորված լինել աղետի դեպքում ճիշտ վարվելակերպի իմացությամբ: Դպրոցները և նախադպրոցական հաստատությունները պետք է պատրաստ լինեն արձագանքել փոքր և մեծ արտակարգ իրավիճակներին,

վտանգից զերծ պահեն երեխաներին և դպրոցի աշխատակիցներին, ինչպես նաև պատրաստ լինեն սովորել և դասավանդել:

Աղետների հետևանքները կարող են մեղմացվել համապատասխան գիտելիքների առկայության և պլանավորման, կառուցվածքային և ոչ կառուցվածքային պաշտպանության միջոցների, աղետների ռիսկերի նվազեցման և աղետներին պատրաստվածության գործողությունների միջոցով:

## Ուղեցույցի ներածություն

Այս ուղեցույցը հիմնականում հիմնված է կենտրոնական Ասիայում Եվրահանձնաժողովի մարդասիրական օգնության վարչության աղետներին պատրաստվածության ծրագրի իրականացման փորձի և դրանից քաղված դասերի վրա: Ամեն ջանք է գործադրվել մի այնպիսի համապարփակ ուղեցույց ստանալու համար, որում կընդգրկվեն դպրոցում աղետների կառավարման բոլոր համապատասխան հայեցակետերը: Այդուհանդերձ, հիմնադրամի գրասենյակներին խրախուսվում է օգտվել նաև այլ ռեսուրսներից (այն է՝ ընթացակարգերից, մոտեցումներից և նյութերից), այդ թվում օգտագործել երկրում կամ տարածաշրջանում արդեն առկա ռեսուրսները: Հարկ է նշել, որ այս թեմային նվիրված Եվրահանձնաժողովի մարդասիրական օգնության վարչության աղետներին պատրաստվածության վերջին ծրագրի վերաբերյալ համապատասխան տեղեկություններն ու նյութերը կարելի է գտնել ՖՏՊ (FTP) կայքում:

## 1. Որոշել և ներգրավել շահառուներին՝ ստեղծել Աղետների կառավարման դպրոցական կոմիտե

Դպրոցներում աղետից առաջ, դրա ընթացքում և դրանից հետո դպրոցականների և դպրոցի աշխատակիցների պաշտպանությունն հանդիսանում է դպրոցի ղեկավարության առաջնային պարտականությունը: Աղետներին պատրաստվածության արդյունավետ պլանավորումը սկսում է ղեկավարությունից, այսպիսով խիստ անհրաժեշտ է այս գործընթացում **դպրոցի տնօրենի** պատրաստակամությունն ու ընկալումը: Դպրոցի տնօրենը՝ ուսուցիչների, աղետների կառավարման մարմինների տեղի աշխատակիցների և ծնողների աջակցությամբ, ապահովում է դպրոցներում աղետների կառավարման կենսագործման առաջնորդումը:

Անհրաժեշտ է նաև կոլեկտիվ գործընկերության՝ դպրոցներում և նախադպրոցական հաստատություններում աղետների նվազեցման և աղետներին պատրաստվածության ուղղված գործունեությունն իրականացնելու նպատակով: Դպրոցներում աղետների կառավարման մեջ ներգրավված և դրան նպաստող շահառուների շրջանակը սահմանվում է **Դպրոցում աղետների կառավարման կոմիտեի** ստեղծման միջոցով: Դպրոցների տնօրենները նախագահում են Դպրոցում աղետների կառավարման կոմիտեները և նշանակում են իրենց փոխարինող տեղակալին: Դպրոցում աղետների կառավարման կոմիտեի որպես այլ անդամներ կարող են հանդես գալ հետևյալ անձինք՝ համայնքի ներկայացուցիչներ, արտակարգ իրավիճակների և կրթության տարածքային մարմինների ներկայացուցիչներ, դպրոցում աշխատող բուժքույրեր, ծնողներ, դասատուներ և աջակից անձնակազմի անդամներ (օրինակ՝ պահակներ կամ քարտուղարներ), ինչպես նաև անհրաժեշտության դեպքում՝ աշակերտներ: Աղետների կոմիտեի կառավարման կազմը որոշվելուն պես կարևոր է մշակել և ավարտուն տեսքի բերել **Առաքելության նկարագիրը**, որպեսզի տարբեր անդամներ պարզ պատկերացնեն աղետներին պատրաստվածության պատշաճ մակարդակ պահպանելու և ռիսկերի նվազեցման հետագա միջամտություններ ձեռնարկելու առումով իրենց դերերն ու պարտականությունները:

Դպրոցներում աղետների կառավարման կոմիտեն պատասխանատու է դպրոցի մակարդակով աղետների ընդհանուր կառավարման համար: Կոմիտեի հիմնական գործառույթներից մեկն է հաստատել հաղորդակցման պարզ ուղիներ արտակարգ իրավիճակները տնօրինող մարմինների, կրթական մարմինների, ինչպես նաև համայնքի ու շրջանի մակարդակով աղետին առաջինն արձագանքող մարմինների հետ: Հարկավոր է ձևավորել այնպիսի հարաբերություններ, որ արտակարգ իրավիճակներին արձագանքող մարմինները ծանոթ լինեն դպրոցին:

Քանի որ աղետների տնօրինման և աղետներին պատրաստվածության միջոցառումները պահանջում են, որ տարբեր դերակատարներ համագործակցեն և կիսվեն ունեցած տեղեկություններով, ուստի շահառուների միջև հաղորդակցությունն ունի առանցքային նշանակություն: Դպրոցներում աղետների

տնօրինման կոմիտեի շրջանակներում հաղորդակցվելուց բացի կարևոր է հաղորդակցվել ընտանիքների, համայնքային և տարածքային կրթության և արտակարգ իրավիճակների բաժինների հետ՝ նրանց ներկայացնելով այն տեսանելի ուղերձը, որ դպրոցներն ու տեղական մարմինները համագործակցում են երեխաների անվտանգությունն ապահովելու համար:

Կոմիտեն պետք է նաև որոշի արտակարգ իրավիճակների այն տեսակները, որոնք կարող են տեղի ունենալ դպրոցում և սահմանի այն իրադարձությունները (խթանները), որոնք կարող են ակտիվացնել դպրոցի աղետներին պատրաստվածության ծրագիրը:

## 2. Վտանգների, ռիսկերի և խոցելիության գնահատում

Դպրոցներում աղետների կառավարման պլանավորումը շարունակական և մասնակցային գործընթաց է, որտեղ պետք է ընդգրկված լինեն ղեկավարությունը, ուսումնական հաստատությունները, տեղի համայնքը, տեղական իրավասու մարմինները և ծնողները, որոնք բոլորը պետք է այս ողջ գործընթացում լիազորված լինեն հանդես գալու որպես անվտանգության մշակույթի ստեղծման և խթանման գործակալներ: Դպրոցում անվտանգության ապահովման մեկնարկային կետն ու անկյունաքարը հանդիսանում են վտանգների, ռիսկերի և խոցելիության գնահատումը, որը թույլ է տալիս պլանավորումը կազմակերպել տեղի ֆիզիկական և սոցիալական իրողությունների հիման վրա: **Աղետներին պատրաստվածության որակը և ռիսկերի գնահատման որակը գտնվում են ուղղակի համամասնության մեջ:**

Վտանգների գնահատումը ենթադրում է գիտական տեղեկատվության պաշտոնական աղբյուրներից օգտվելու հնարավորություն, ինչպես նաև խորհրդատվություն տեղի փորձագետներից երկրաբանական և հիդրոօդերևութաբանական վտանգների տեսակների, դրանց հաճախականության և տիպիկ հետևանքների վերաբերյալ: Մարդածին ռիսկերի (օրինակ՝ հրդեհ) գնահատումը կարող է սկսվել դպրոցի կողմից իրականացվող, մասնակցային հետազոտությամբ, որը նվիրված կլինի դպրոցի վայրի և հարակից տարածքի պայմաններին: Ներկա իրողությունների հետազոտության մեջ պետք է ներառվեն տեղի հողերի օգտագործման հետևանքները (օրինակ՝ գործոններ, որոնք կարող են մեծացնել ծյունահյուսերի, սողանքների, ջրահեռացման ուղիների, գետերի կամ մերձափնյա ջրերի վարարման վտանգը), շրջապատող շենքերը, արդյունաբերական աղբի աղբյուրները, վտանգավոր նյութերի պահուստավորման վայրերից վնասարար նյութերի արտահոսքը կամ աղտոտումը, երկաթուղային գծերը, ճանապարհները, էլեկտրական օբյեկտներն ու վերերկրյա լարերը, ինչպես նաև քանո հետ տեղափոխվող աղբը: Կարևոր է, որ այս գործընթացի հիմքում ընկած լինեն տեղի գիտելիքները, ավագ սերնդի ներկայացուցիչներից ստացած անցյալի փորձը, ինչպես նաև պատրաստվածությունը մոտակա տասնամյակում կլիմայական փոփոխությունների կանխատեսվող հետևանքներին: Նման գնահատմամբ պետք է ուսումնասիրվի, թե ինչպես կարող են փոխվել առանձին վտանգներն ու ռիսկերը կախված տարվա եղանակից:

Վտանգների գնահատման գործում առաջին քայլն է որոշել, թե դպրոցների համար ինչպիսի սպառնալիքներ են ներկայացնում բնական և մարդածին վտանգները: Նման գնահատումը պետք է սկսվի շենքի և դրա գտնվելու վայրի ուսումնասիրմամբ: Շինության վայրը պետք է ուսումնասիրվի հաշվի առնելով նախկինում դրա օգտագործման եղանակը, այն է՝ հին հիմքը, բնահողի թեքությունները կամ հողաթմբերը, որոնցում կարող են խոռչներ կամ սողանքներ առաջանալ: Հարակից տարածքը պետք է ստուգել այնտեղ վտանգ ներկայացնող բուսականության, շինություններ կամ գործունեություն հայտնաբերելու տեսանկյունից: Արտակարգ իրավիճակների վարչության ներկայացուցիչները պետք է աջակցեն վտանգների գնահատման հարցում: Տվյալ տարածքում գործող ազգային օդերևութաբանական ծառայության կայանը՝ դրա արևայության դեպքում, կարող է տրամադրել որոշակի կլիմայական տվյալներ ընդհանուր և յուրահատուկ օդերևութաբանական օրինաչափությունների վերաբերյալ: Հարկ է նաև ուսումնասիրել բնական և տեխնածին վտանգների նախապատմությունը: Տեղի պատմական ակումբները, արտակարգ իրավիճակների ծառայությունների վարչությունները, գրադարանները և թերթերի արխիվները կարող են ծառայել որպես տեղեկատվության լավ աղբյուր: Տարեցները նույնպես կարող ներկայացնել անցյալում տեղի ունեցած իրադարձությունների բանավոր պատմությունը: Հետազոտման ծրագրերում կարող են ընդգրկվել նաև աշակերտներ:

խոցելիության գնահատման ընթացքում հաշվի են առնվում մարդիկ, գույքը և շրջակա միջավայրը, այն է՝ աշակերտների շրջանում շատ խոցելի երիտասարդ կամ հաշմանդամ երեխաների առկայությունը, արդյոք տղաներն ու աղջիկները տարբեր կերպով են ենթարկվում ռիսկերի, բաց տարածքն ու էվակուացման ուղիները և արդյոք տեղի համայնքը դիտարկում է դպրոցը որպես անվտանգ վայր կամ համայնքային ապաստան: Հայտնաբերված յուրաքանչյուր վտանգի, ռիսկի կամ խոցելիության դեպքում, պետք է նախատեսել, գնահատել և ընտրել հակազդման միջոցներ՝ դպրոցում աղետներին պատրաստվածության պլանը ձևավորվելու նպատակով: Գնահատումն այն հիմքն է, որի վրա պետք է կառուցվեն աղետներին պատրաստվածության հաստատուն ծրագրեր:

### 3. Դպրոցներում աղետներին պատրաստվածության պլանավորում

**Յուրաքանչյուր դպրոցի համար անհրաժեշտ է մշակել իր առանձնահատկություններից բխող աղետներին պատրաստվածության պլան:** Ամբողջական և համապարփակ պլանն անհնար է մշակել մեկ օրում: Պետք է հաշվի առնել, որ անհրաժեշտ տեղեկություններ հավաքելու, պլանը մշակելու և համապատասխան մարդկանց ներգրավելու համար որոշակի ժամանակ է հարկավոր:

**Դպրոցներում աղետներին պատրաստվածության պլանի մշակմանը պետք է մասնակցեն համայնքի այլ խմբերի ներկայացուցիչները, ներառյալ՝ իրավապահները, հրշեջները, շտապօգնության բժիշկները, բուժաշխատողները և հոգեբանները:** Այս իմաստով անհարկի և ժամանակատար հայտնագործություններ անելու կարիք չկա: Վերոհիշյալ մասնագետները գիտեն, թե ինչպես պատրաստվել և դիմակայել աղետներին, հետևաբար աղետներին պատրաստվածության համակարգված գործնական պլան կազմելու համար հարկավոր է դիմել նրանց օգնությանը:

Աղետներին պատրաստվածության պլանը կենդանի փաստաթուղթ է, **ուստի և պարբերական վերանայման և վերափոխման կարիք ունի:** Եթե նմանօրինակ պլանն արդեն կազմվել է, ապա հարկավոր է այն վերանայել, արդիականացնել և իրագործել: Շատ կարևոր է, որ համապատասխան շահառուները ծանոթանան աղետներին պատրաստվածության պլանին և այդտեղ սահմանված ընթացակարգերին:

Տեղի բնակիչների և աշակերտների յուրահատուկ կարիքները բավարարելու համար աղետներին պատրաստվածության պլանները պետք է հարմարեցվեն համայնքների, շրջանների և դպրոցների պայմաններին և լիովին համապատասխանեն ազգային օրենսդրությանը:

Իրականում աղետներին պատրաստվածության պլանները կարելի է տարբեր մարդկանց տարբեր կերպ ներկայացնել: Օրինակ, դպրոցներում կարելի է օգտագործել մանրամասն ձեռնարկներ պլաններ կազմողների համար, պաստառներ ուսուցիչների համար, գրքույկներ աշակերտների համար, գործիքներ արտակարգ իրավիճակները կառավարողների համար, ինչպես էվակուացման ուղիները պատկերող գրպանի քարտեզներ դպրոցի մնացած աշխատակիցների համար: Պլանները կազմելիս հարկավոր է հաշվի առնել տարիքային առանձնահատկությունները:

Հարկավոր է հաշվի առնել նաև երեխաների և դպրոցի աշխատակիցների գանազան կարիքները: Դպրոցում աղետներին պատրաստվածության պլանները պետք է հաշվի առնեն ֆիզիկական, զգայական, շարժական, տարիքային կամ մտավոր զարգացման խնդիր ունեցող երեխաների կամ մանկավարժների կարիքները: Հատուկ ուշադրություն կարիք ունեն նաև տվյալ երկրի լեզվին չտիրապետող երեխաները: Ընտանիքներին հանձնվող փաստաթղթերը երբեմն հարկավոր է մի քանի լեզվով:

**Պատրաստվածության պլանը պետք է անմիջապես հասանելի լինի ուսուցիչների և այլ աշխատակիցների համար,** որպեսզի վերջիններս կարողանան հասկանալ պլանի բաղադրիչներն ու գործել դրանց համաձայն: Նրանք պետք է կանխավ իմանան, թե ինչպես վարվել արտակարգ իրավիճակներում ոչ միայն վնասներից զերծ մնալու, այլև խուճապն ու տագնապը մեղմացնելու համար:

Անհրաժեշտ է համագործակցել իրավապահների և փրկարարների հետ պարզելու այն արտակարգ իրավիճակները, որտեղ պահանջվում է արտաքին միջամտություն: Անհրաժեշտ է պարզել, թե ինչպիսի դերակատարում կունենան արտաքին մասնագետները, ինչպիսի պարտականություններ կստանձնեն և ինչպես կաշխատեն դպրոցի անձնակազմի հետ: Հատկապես կարևոր է որոշել, թե ով է հաղորդակցվելու աղետից տուժած երեխաների ծնողների հետ:

**Մշակել անձնակազմի, երեխաների, նրանց ընտանիքների և լրատվամիջոցների հետ հաղորդակցության միջոցները** Անհրաժեշտ է քննարկել այն հարցը, թե դպրոցն ինչպես է հաղորդակցվելու աղետից ուղղակիորեն կամ անուղղակիորեն տուժած անձանց հետ: Հաղորդակցման պլանավորման առաջին քայլերից է մշակել մեխանիզմ, որի օգնությամբ դպրոցի աշակերտներն և անձնակազմը կտեղեկացվեն արտակարգ իրավիճակի առաջացման մասին և համապատասխան հրահանգներ կստանան: Հույժ կարևոր է, որ դպրոցներ ու արտակարգ իրավիճակներին արձագանքող մարմիններն օգտվեն եզրույթների միևնույն սահմանումից: Հարկ է խուսափել ավելորդ շփոթությունից, քանզի արտակարգ իրավիճակներին արձագանքողներից ոչ բոլորն են նույն կերպ ընկալում այդ եզրույթների նշանակությունը: Շատ կարևոր է որոշել տեղեկատվությունը փոխանցելու ձևը: Խորհուրդ է տրվում խոսել պարզ լեզվով և խուսափել հապավումներից: Դպրոցի շենքից երեխաներին էվակուացնելու ժամանակ հաղորդակցման ինչպիսի միջոցներ պետք է օգտագործվեն նրանց վերահսկող անձնակազմին հրահանգներ տալու համար, օրինակ՝ բջջային հեռախոսներ, ռադիոկապ, ներքին կապի միջոցներ կամ կարճ հաղորդագրություններ: Արտակարգ իրավիճակների վարչության ներկայացուցիչների հետ պետք է անպայման քննարկել հաղորդակցման առավել անվտանգ միջոցները: Հարկավոր է նախապես պատրաստել նամակների և մամլո հաղորդագրությունների նմուշներ, որպեսզի խուճապի և քաոսային իրավիճակում դպրոցի աշխատակիցները ստիպված չլինեն դրան անդրադառնալ: Շատ ավելի հեշտ է նման նամակներում և մամլո հաղորդագրություններում չնչին փոփոխություններ կատարել, քան ամեն անգամ դրանք կազմել նորովի:

Ընտանիքներին կամ հասարակության այլ խմբերին տեղեկատվություն հաղորդելու համար հաճախ չափազանց օգտակար կարող են գտնվել լրատվամիջոցները: **Քանի դեռ աղետ չի պատահել հարկավոր է աշխատել տեղի լրատվամիջոցների հետ նման միջադեպի պարագայում դպրոցի կարիքները ներկայացնելու համար:**

**Նախքան արտակարգ իրավիճակ կարձանագրվի հարկավոր է քարտեզներ կազմել և տեղեկություններ հավաքել դպրոցի շենքի ու շինությունների վերաբերյալ:** Աղետի դեպքում դրան արձագանքող անձինք պետք է իմանան դպրոցում ամեն առարկայի գտնվելու վայրը: Հարկավոր է կազմել դպրոցի քարտեզներ, որտեղ կընդգրկվեն տեղեկություններ դասարանների, միջանցքների, սանդուղավանդակների, կենցաղային սարքավորումների անջատիչների, ինչպես նաև հնարավոր աշխատանքային հարթակների վերաբերյալ: Արտակարգ իրավիճակներին արձագանքողները պետք է նախօրոք ստանան նման տեղեկատվության պատճենները: Արտակարգ իրավիճակներում հարկ է որոշակի տարածք հատկացնել, որտեղ արձագանքողները կկարողանան կազմակերպել իրենց աշխատանքը, այսպես օրինակ՝ բժիշկներն առաջին օգնություն կցուցաբերեն վիրավորներին, հասարակայնության հետ կապերի մասնագետը տեղեկություններ կհաղորդի լրատվամիջոցներին, իսկ երեխաները կգտնեն իրենց հարազատներին: Աշակերտների՝ ընտանիքների հետ վերամիավորվելու համար նախատեսված տարածքը պետք է հնարավորինս հեռու գտնվի լրատվամիջոցների համար նախատեսված տարածքից: Դեպքի վայր փրկարարների մուտքը ապահովելու, իսկ պատահական անցորդների ու հետաքրքրասերների մուտքը սահմանափակելու համար անհրաժեշտ միջոցառումները պետք է սահմանվեն արտակարգ իրավիճակների վարչության ներկայացուցիչների օգնությամբ:

Դպրոցներում աղետներին պատրաստվածության պլանի շրջանակներում պետք է նաև սահմանել **աշակերտների գտնվելու վայրը որոշելու և ծնողներին հանձնելու ընթացակարգերը:** Արտակարգ իրավիճակից անմիջապես հետո անհրաժեշտ է գտնել դպրոցի բոլոր աշակերտներին, աշխատակիցներին և այցելուներին: Եթե կան անհայտ կորած անձինք, ապա փրկարարները պետք է բոլորովին այլ մոտեցում կիրառեն: Աշակերտների ընտանիքի անդամներին հարկավոր է հայտնել երեխաներին հարազատներին փոխանցելու ընթացակարգերը նախքան աղետի տեղի ունենալը: Սովորաբար ընտանիքի անդամները գալիս են դպրոց իրենց երեխաներին անհապաղ վերցնելու համար: Հարկավոր է վերահսկել աշակերտներին ծնողներին հանձնելու գործընթացը՝ ապահովելով, որ աշակերտներին հանձնեն միայն իրավասու անձանց:

**Դպրոցներում աղետներին պատրաստվածության պլանները հաջողությամբ իրականացնելու տեսակետից մեծ է գործնական պարապմունքների նշանակությունը:** Պատրաստվածությունը ենթադրում է վարժություններ և վարժանքներ դպրոցի աշխատակիցների, երեխաների և փրկարարների համար: Բազում դպրոցներ աղետների պատրաստվածության իրենց պլաններում սահմանված ընթացակարգերը կենսագործելու և դրանց արդյունավետությունը ստուգելու տեսակետից շատ օգտակար են համարում սեղանի շուրջ անցկացվող վարժությունները: Սեղանի շուրջ անցկացվող վարժությունները ենթադրում են արտակարգ

իրավիճակում ձեռնարկվելիք քայլերի քննարկումը՝ դպրոցի և աղետին արձագանքող մարմինների մասնակցությամբ: Պարապմունքների և վարժությունների ընթացքում հաճախ են առանձնացվում հաղորդակցման և արտակարգ իրավիճակների կառավարման հետ կապված այնպիսի հարցեր և խնդիրներ, որոնք անհրաժեշտ է հաշվի առնել աղետներին պատրաստվածության դպրոցական պլաններում: Ուսուցիչները պետք է վերապատրաստում անցնեն արտակարգ իրավիճակներում երեխաներին, հատկապես՝ խուճապի մատնված երեխաներին հանգստացնելու կարողություններ ձեռք բերելու առումով: Նման հարցերի մանրամասն քննարկումը կնպաստի պատրաստվածության պլանի կատարելագործմանը և իրական աղետին արձագանքելու համար դպրոցի նախապատրաստմանը:

Անհրաժեշտ է հստակ սահմանել յուրաքանչյուրի դերակատարումը և պարտականությունները: Դպրոցներում աղետներին պատրաստվածության պլանները պետք է պարունակեն հետևյալ հարցերի պատասխանները. ինչպիսի՞ միջոցներ են ձեռնարկվելու, ե՞րբ են ձեռնարկվելու այդ միջոցները, և ո՞վ է ղեկավարելու դրանք, այսինքն՝ հարկավոր է մշակել, ընդունել և հաստատել կազմակերպչական և (կամ) անվտանգության աշխատակիցների վերահսկողության համակարգ:

#### 4. Արտակարգ իրավիճակների ահազանգման համակարգ

Դպրոցների և երեխաների անվտանգությունն ապահովելու համար էական նշանակություն ունեն արտակարգ իրավիճակներին արագ և արդյունավետ արձագանքելու կարողությունները: Ուստի, հարկավոր է նախապես սահմանել արտակարգ իրավիճակում հայտնված յուրաքանչյուրի անելիքը: Բոլորը՝ մեծից փոքր, պետք է ճանաչեն միմյանց և իմանան արտակարգ իրավիճակներում իրականացվելիք գործողությունների հաջորդականությունը: Այսպիսով, անհրաժեշտ է սահմանել, հաստատել և մի քանի անգամ փորձարկել արտակարգ իրավիճակների ահազանգման համակարգ՝ հետևելով դրա մասնակիցների միջև պարզ հիերարխիային: Արտակարգ իրավիճակների ահազանգման համակարգը դպրոցի աշխատակիցների (և երեխաների) միջև պարտավորությունների բաշխման համակարգված միջոց է, քանի որ յուրաքանչյուրը հաշվետու է միայն մեկ անձին, իսկ վերահսկողության շրջանակը չի գերազանցում 3-ից 7 ենթակա անձանց: Ուստի հարկավոր է այնպես մշակել արտակարգ իրավիճակների ահազանգման համակարգը, որպեսզի հնարավոր լինի այն ներգրավել հրահանգների միասնական գործընթացներում:

Արտակարգ իրավիճակների ահազանգման համակարգում պետք ընդգրկված լինեն բավարար թվով դպրոցի աշխատակիցներ, քանի որ մեկից ավելի գործառույթներ կատարող անձը կարող է անտեսել իր առջև դրված կարևոր առաջադրանքները: Պլանավորման ընթացքում նման դերերը կբաշխվեն անհատների և նրանց փոխարինողների միջև:

Ստորև ներկայացվում են աղետների ահազանգման հաջողված համակարգի առանցքային գործառույթները:

**Դպրոցի և (կամ) արտակարգ իրավիճակների հրահանգիչ** Տվյալ անձն արտակարգ իրավիճակն ամբողջությամբ իր հսկողության տակ է առնում և հաճախ հանդես է գալիս որպես դպրոցի կառավարումն իրականացնող տնօրեն: Նա կարող է դիմել տեղի փրկարար ծառայության ներկայացուցիչների օգնությանը:

**Հանրային տեղեկատվության համար պատասխանատու մասնագետ** Տվյալ անձը պատասխանատու է արտակարգ իրավիճակներում աշակերտների և դպրոցի աշխատակիցների ընտանիքի անդամներին, համայնքի և լրատվամիջոցների ներկայացուցիչներին տեղեկատվություն հաղորդելու համար: Այս գործընթացին նպաստելու տեսակետից հսկայական դեր են կատարում լրատվամիջոցները:

**Անվտանգության համար պատասխանատու մասնագետ** Տվյալ անձը պատասխանատու է միջադեպի վայրի և այդտեղ գտնվող անհատների անվտանգության համար: Ի թիվս այլ պարտականությունների՝ նա լիազորված է որոշել, թե արդյոք երեխաների էվակուացման վայրը դպրոցից բավականաչափ հեռավորության վրա է գտնվում, թե՛ ոչ: Այս դերը սովորաբար ստանձնում է արտակարգ իրավիճակներին արձագանքող մարմինների աշխատակիցը:

**Հասարակայնության հետ կապերի մասնագետ** Տվյալ անձը պատասխանատու է արտակարգ իրավիճակին արձագանքող բոլոր մարմինների հետ տարվող աշխատանքները համակարգելու համար: Շատ կարևոր է, որ նա ունենա հաղորդակցման զարգացած հմտություններ և կարողանա արձագանքող մարմինների և դպրոցի աշխատակիցներին կարևոր տեղեկություններ հայտնել դպրոցի շինությունների տեղակայման և անհրաժեշտ գործողությունների վերաբերյալ:

**Մոնիթորինգի և գնահատման համար պատասխանատու մասնագետ** Տվյալ անձը պատասխանատու է արտակարգ իրավիճակը փաստագրելու, նոր հայտնաբերությունները վերլուծելու և հետագա հնարավոր գործողությունները ծրագրելու համար:

**Մատակարարման մասնագետ** Տվյալ անձը հոգում է արտակարգ իրավիճակում մատակարարման և անհրաժեշտ կադրերի ապահովման հետ կապված կարիքները: Մատակարարման մասնագետը զբաղվում է արտակարգ իրավիճակներին արձագանքող մարմինների համար անհրաժեշտ միջոցների մատակարարմամբ: Մատակարարման մասնագետի պարտականություններում ընդգրկված են երկարաժամկետ կարիքները (առաջին չորս ժամից հետո), այդ թվում՝ սննդամթերքի և ջրի, լվացվելու պարագաների մատակարարումը, իսկ անհրաժեշտության դեպքում՝ փոխադրամիջոցների հատկացումը: Մատակարարման մասնագետը նաև պատասխանատու է արտակարգ իրավիճակներում զանազան առաջադրանքների կատարման նպատակով աշխատակիցներ փնտրելու և նշանակելու համար: Այս աշխատանքի համար կարող է պահանջվել գտնել աշխատակիցներ, ովքեր երեխաների անվտանգությամբ անմիջապես զբաղվող աշխատակիցներին հաղորդագրություններ կփոխանցեն արտակարգ իրավիճակը կառավարող մասնագետից:

Դպրոցներում պետք է մշակվեն և պարբերաբար փորձարկվեն աղետներին և (կամ) արտակարգ իրավիճակներին արձագանքելու ընթացակարգեր՝ ընդունված չափանիշներին համապատասխան: Անհրաժեշտ է ընդհանուր բառացանկ կազմել: Շատ կարևոր է, որ Դպրոցում աղետների կառավարման կոմիտեի և անվտանգության աշխատակիցների համակարգի ներկայացուցիչները, ինչպես նաև դպրոցի և արտակարգ իրավիճակներին արձագանքող մարմինների աշխատակիցները ծանոթ լինեն միմյանց կողմից օգտագործվող եզրույթներին: Էվակուացման, տարածքի մեկուսացման և այլ գործողությունների հրահանգները պետք է լինեն պարզ, այլ ոչ թե՛ կախված վտանգի տեսակից:

Ընդունված չափանիշներին համապատասխան արտակարգ իրավիճակների ընթացակարգերը կենսագործելու համար դպրոցները պետք է սպառազինված լինեն անհրաժեշտ սարքավորումներով:

## 5. Դպրոցներում աղետներին պատրաստվածությունն ապահովող հիմնական սարքավորումները

Արտակարգ իրավիճակների ահազանգման համակարգը պետք է սպառազինված լինի նման իրավիճակներին արձագանքելու համար անհրաժեշտ բոլոր սարքավորումներով:

Դպրոցում աղետներին պատրաստվածությունն ապահովող հիմնական սարքավորումների պետական մակարդակով ընդունված չափանիշները սահմանելիս անհրաժեշտ է հաշվի առնել պետական օրենսդրությամբ սահմանված պահանջները, ինչպես նաև դպրոցի տնօրենի, ուսուցիչների, արտակարգ իրավիճակների վարչության, արտակարգ իրավիճակներին արձագանքող մարմինների աշխատակիցների, օրինակ՝ հրշեջների և շտապօգնության բժիշկների խորհուրդները: Կրակմարիչների, առաջին բուժօգնություն փաթեթների, ավազով դույլերի, վերմակների, լապտերների, մարտկոցների և այլ սարքավորումների հետ միասին փրկարարներին հարկավոր է տրամադրել նաև բոլոր դռները բացող բանալիներ, որպեսզի նրանք կարողանան մուտք գործեն դպրոցի բոլոր սենյակներ: Բոլորին անհրաժեշտ է տրամադրել հաղորդակցման համար անհրաժեշտ հեռախոսներ և ռադիոընդունիչներ: Հարկ է իմանալ ընտանիքի անդամների կոնտակտային տվյալները: Անհրաժեշտ է առաջին օգնության պարագաների պաշար ունենալ: Հարկավոր է հաշվի առնել, թե արդյոք երեխաների և դպրոցի աշխատակիցների համար հարկավոր են սննդամթերքի և ջրի պաշարներ:

Քարտուղարների, բուժքույրերի և ուսուցիչների համար արտակարգ իրավիճակներին արձագանքման փաթեթ պատրաստելով՝ անհրաժեշտ է ապահովել նման պարագաների մատչելիությունը: Օրինակ, բուժքրոջ դեղորայքային փաթեթում կարող են ընդգրկվել մանկական և առաջին բուժօգնության դեղամիջոցներ

(անաֆիլակտիկ շոկի դեպքում օգտագործվող փաթեթներ, որոնք բժշկի նշանակմամբ կարող են օգտագործվել շնչառական համակարգի խանգարման, օրինակ սուր ալերգիկ ռեակցիաների դեպքում), ինչպես նաև առաջին բուժօգնության այլ պարագաներ: Ուսուցչի՝ արտակարգ իրավիճակներին արձագանքելու միջոցների փաթեթում սովորաբար ներառվում են դպրոցներում աղետներին պատրաստվածության ձեռնարկը և աշակերտների թարմացված անվանացանկը:

## 6. Ոչ կառուցվածքային ռիսկերի մեղմացում

Շենքի կառուցվածքային մաս չհանդիսացող բոլոր տարրերը, այդ թվում՝ բարձր հատակները, կախովի առաստաղները, լուսամուտները և ողջ կահույքը, համարվում են ոչ կառուցվածքային տարրեր: Սովորաբար ոչ կառուցվածքային տարրերի շարքում առանձնացվում են՝ կախովի առաստաղներ, լուսավորման սարքավորումներ, լուսամուտներ, դռներ, կահույք, պահարաններ, համակարգիչներ, կենցաղային տեխնիկա, հեռուստացույցներ, ձայնարկիչներ, ցուցափեղկեր, գրադարակներ, ներքին կամ արտաքին զարդաքանդակներ, ջեռուցման, օդափոխման և օդորակման համակարգեր, խողովակաշարային և էլեկտրական համակարգեր, վթարային գեներատորներ և այլն:

Մեղմացումը սահմանվում է որպես վտանգների և դրանցից բխող աղետների բացասական հետևանքների նվազմանը կամ սահմանափակմանն ուղղված միջոց: Այսպիսով, ընդհանուր առմամբ, կարելի է առանձնացնել ոչ կառուցվածքային ռիսկերի մեղմացմանն ուղղված հետևյալ գործողությունները. ստուգել շենքի կոյուղու խողովակները, ջրահեռացման խողովակները և համակարգը, ինչպես նաև ուղղահայաց ջեռուցման, օդափոխման և օդորակման համակարգերը և այլ էլեկտրական սարքավորումները, կայուն մակերեսներին ամրացնել համակարգիչները, ստեղնաշարները և ծանր առարկաները, այդ թվում՝ պահարանները, գրադարակների վրա դրված առարկաները, լուսամուտները, պատերից կախված հայելիները, նկարները և այլ առարկաները՝ երկրաշարժի ժամանակ դրանց ընկնելու հնարավորությունը կանխելու համար, համոզվել, որ նախադպրոցական հաստատությունների և (կամ) դպրոցների շուրջ գտնվող այլ շինությունները և ծառերն ապահով տարածության վրա են գտնվում (իրենց բարձրությունից ավելի մեծ տարածքի վրա) և այլն:

Ամեն դեպքում անհրաժեշտ է սահմանել ոչ կառուցվածքային ռիսկերի հետևանքները մեղմացնելու գործողությունները՝ հիմնվելով դպրոցներում և հարակից տարածքներում վտանգների, ռիսկերի և խոցելիության գնահատման վրա:

## 7. Աղետներին պատրաստվածության վարժություններ

Դպրոցում աղետներին պատրաստվածության պլանը և ահագանգման համակարգը փորձարկելու, արտակարգ իրավիճակին արձագանքելու կարողությունները զարգացնելու, ինչպես նաև գնահատմանը, պլանավորմանը և ռիսկերի նվազեցմանն ուղղված գործողությունների անհրաժեշտության մասին իրազեկվածության մակարդակը բարձրացնելու հիմնական միջոցներից է արտակարգ իրավիճակների պարբերական վարժությունները: Նման վարժությունները թույլ են տալիս որոշել ուսուցման կարիքները, նոր բնագղերը ձևավորել և հմտություններ սովորեցնել գործնական կրկնությունների միջոցով:

Հետևյալ վարժանքները կիրառելի են ինչպես անկանխատեսելի, այնպես էլ վաղ փուլում կանխատեսելի աղետների դեպքում՝

- ընկնել հատակին, ծածկվել, բռնվել (երկրաշարժ),
- կազմակերպել մարդկանց էվակուացումը (հրդեհ, երկրաշարժ),
- հազնել փրկարար բաճկոններ և որոշել ջրի անվտանգության աստիճանը (ջրհեղեղ, ցունամի),
- տեղափոխվել ավելի բարձր վայր (ցունամի),



- գտնել ապաստարան (փոթորիկ, պտուտահողմ),
- հանգցնել փոքր հրդեհները,
- կանգ առնել, ընկնել հատակին և գլորվել (կրակից բռնկվելու դեպքում),
- կազմակերպել որոնման և փրկարարական աշխատանքներ,
- տեղում կառուցված ապաստարան (վնասակար նյութերի արտանետում և բռնություն),
- բուժօգնություն ստանալու առաջնահերթության հիման վրա արտակարգ իրավիճակներում տուժածների բաժանումը և նրանց առաջին օգնության տրամադրումը,
- աշակերտներին ծնողներին հանձնելու կանոնակարգը,
- արտակարգ իրավիճակներում հաղորդակցման կազմակերպում,
- արտակարգ իրավիճակներին արձագանքողների միջև դերերը բաշխելու ճկուն համակարգ,
- արտակարգ իրավիճակներին արձագանքելու դրույթներ,
- հասարակայնության հետ կապեր, հաղորդակցում և փաստաթղթերի կազմում:

Էվակուացման և պաշտպանական վարքի այլ դրսևորումների հետ մեկտեղ՝ աշակերտների արդյունավետ ուսուցման համար մեծ հնարավորություններ են ընձեռնում դպրոցական վարժանքները: Ճապոնիայում աշակերտները խաղում են հրշեջների շղթա» խաղը և նման այլ խաղեր, որոնց ընթացքում երեխաները պետք է բակի մի ծայրից մյուսը հասցնեն ջրով լի դուլներ՝ կարծես իրականում օգնելով մարել հրդեհը: Աշակերտները նաև կատարում են դատարկ կրակմարիչներով հրդեհը մարելու վարժություններ: Իրանում աշակերտները սովորում և փորձարկում են վիրավորներին ապահով տեղափոխելու հնարքները: Նման գործողությունները կարող են նաև ընդգրկվել ամենօրյա կանոնավոր սպորտային վարժանքներում:

Հետևյալ երեք վարժանքներից յուրաքանչյուրը շատ օգտակար է՝ հատուկ հմտությունների և վարքագծի ձևավորմանն ուղղված առաջին հայացքից անբնական թվացող հատուկ վարժություններ, հատկապես աղետների կառավարման և դպրոցի անձնակազմի առաջնորդող խմբերի համար սեղանի շուրջ անցկացվող վարժություններ, որտեղ շեշտադրվում են համակարգման բնույթի մի շարք աշխատանքներ, և համայնքի բոլոր անդամների համար նախատեսված ամբողջական իրավիճակային վարժանքներ:

Իրավիճակային վարժանքներն ընձեռնում են հետևյալ հնարավորությունները՝ համակարգել արտակարգ իրավիճակներին արձագանքող միջոցառումների, ինչպես նաև գործառական հմտությունների ձեռքբերմանն ուղղված աշխատանքները, օրինակ՝ լապտերներով որոնողական և փրկարարական աշխատանքներ, հրդեհամարման աշխատանքներ, վնասակար նյութերի արտանետման վերահսկողություն, կյանքի պահպանման, անվտանգության ապահովման, սննդի մատակարարման, ապաստարանի կառուցման, սանիտարական պայմանների բարելավման, հոգեբանական և սոցիալական աջակցության համար անհրաժեշտ կազմակերպչական հմտություններ:

## 8. Դպրոցներում աղետներին պատրաստվածության պլանի նմուշի բովանդակությունը կարող է ներառել հետևյալ կետերը (առանց բացառության) .

1. Դպրոցներում աղետներին պատրաստվածության պլանի նպատակները,
2. Սահմանում և տերմինաբանություն,
3. Դպրոցներում աղետներին պատրաստվածության պլանի խնդիրները,

4. Վտանգի և խոցելիության գնահատում՝ տեղեկություններ դպրոցի և հարակից շինությունների մասին, վտանգի վերլուծություն, ենթադրություններ,
5. Դպրոցում աղետների կառավարման կոմիտե,
6. Տարեկան ուսումնասիրություններ, սպասարկում և արդիականացում, այդ թվում՝ ուսուցողական վարժություններ,
7. Արտակարգ իրավիճակների ահազանգման համակարգ՝ յուրաքանչյուրի պարտավորությունների սահմանում և դրանց կատարման կազմակերպում,
8. Դպրոցներում աղետներին պատրաստվածության պլանի գործարկում՝ խթանները, պլանը գործարկող անձինք, ահազանգում,
9. Դպրոցներում կոմունալ և այլ ծառայություններ՝ ջրի, գազի և հոսանքի մատակարարում, հեռախոսակապ, ջեռուցման համակարգ,
10. Էվակուացում՝ էվակուացման ընթացակարգեր և միջադեպի վայրում և դրանից դուրս անվտանգ տեղ գտնելու ընթացակարգեր,
11. Օգտակար հեռախոսահամարներ (և համապատասխան հղումներ)՝ հրշեջ ծառայության տարածքային բաժանմունք, ոստիկանության տարածքային բաժանմունք, տեղական կառավարման մարմիններ և այլն,
12. Գործողությունների մատյան (շաբլոն) - գրանցել աղետներին պատրաստվածության և ոչ կառուցվածքային ռիսկերի մեղմացման ուղղությամբ տարվող աշխատանքները,

### 13. Հավելվածներ

- Արտակարգ իրավիճակների ահազանգման համակարգ և հաղորդակցման շղթա,
- դպրոցի և համայնքի քարտեզներ,
- դպրոցի կողմից ծնողին հասցեագրված նամակի նմուշ,
- աղետին արձագանքելու տեսակետից անձնակազմի, օրինակ՝ առաջին բուժօգնության վերապատրաստում անցած աշխատակիցների հմտությունների ուսումնասիրություն,
- Արտակարգ իրավիճակներում ձեռնարկված գործողությունների մատյան՝ աղետներին արձագանքելու շրջանակներում իրականացրած գործողությունները գրանցելու համար,
- Դպրոցում արտակարգ իրավիճակներում օգտագործվող պարագաներ՝ կոնտակտային տվյալներ, աշակերտների տվյալների գրանցում, իրավասու մարմինների կոնտակտային տվյալներ, դպրոցի հատակագիծ, փոխադրամիջոցներ տրամադրողներ և այլն:
- Արտակարգ իրավիճակում օգտագործվող պարագաներ՝ սննդամթերք, ջուր, վերմակներ, գրպանի էլեկտրական լապտերներ և այլն,
- Գործառական կանոնակարգ
  - Տարահանման ընթացակարգեր
  - Տարածքի մեկուսացում
  - Տեղում ապաստարան կառուցելու ընթացակարգեր,
  - Հատակին ընկնելու, ծածկվելու և բռնվելու ընթացակարգեր,
- Միջադեպի բնույթով պայմանավորված ընթացակարգեր՝
  - Երկրաշարժ,
  - Ջրհեղեղ,
  - Խստաշունչ եղանակ,
  - Հրդեհ,
  - Վնասակար նյութերի արտանետում,
  - Կառուցվածքային վթար,
  - Արտակարգ իրավիճակներ առողջապահության ոլորտում,

- Կոմունալ ծառայությունների վթար,
- Ատոմակայանի վթարներ:

Ղեկավար աշխատակից հանձնարարում է իր ստորադասին մշակել և (կամ) կատարելագործել աղետներին պատրաստվածության պլանը՝ խորհրդակցելով արտակարգ իրավիճակների և կրթության ոլորտի տարածքային մարմինների հետ:

#### **ՀԱՏՈՒԿ ՆՇՈՒՄ. Դպրոցներում աղետներին պատրաստվածության գործընթացի փաստագրում**

Շատ կարևոր է, որպեսզի տարածքային գրասենյակները գրանցեն դպրոցներում և (կամ) նախադպրոցական հաստատություններում աղետներին պատրաստվածության շրջանակներում իրականացրած գործողությունները: Փաստագրումը դպրոցներում աղետներին պատրաստվածության պլանավորման գործընթացի էական բաղադրատարրերից է, որը մեզ կապահովի ծանրակշիռ ապացույցներով և թույլ կտա երկրում շարունակել ծրագրի քարոզմանն ուղղված մեր աշխատանքները: Աղետները կառավարող համայնքի ներկայացուցիչներն ընդհանուր համաձայնության են եկել դպրոցներում և (կամ) նախադպրոցական հաստատություններում աղետներին պատրաստվածության համակարգը բարելավելու հարցի շուրջ: Այդուհանդերձ, հիմնական խնդիրը շարունակում է մնալ դպրոցներում և (կամ) նախադպրոցական հաստատություններում աղետներին պատրաստվածության և դրանց հետևանքների մեղմացման տարբեր հայեցակետերի համար փորձված և փորձարկված ռազմավարությունների պակասը: Եվրահանձնաժողովի մարդասիրական օգնության վարչության աղետներին պատրաստվածության ծրագիրը փորձնական ծրագրով ընտրված դպրոցներում և նախադպրոցական հաստատություններում աղետներին պատրաստվածության և (կամ) դրանց հետևանքների մեղմացմանն ուղղված գործողությունները փաստագրելու բացառիկ հնարավորություն է ընձեռում: Այսպիսով, աղետներին պատրաստվածությանն ուղղված միջոցներ ձեռնարկելիս շատ կարևոր է գրանցել այդ գործընթացի յուրաքանչյուր քայլը: Օրինակ, Դպրոցում աղետների կառավարման կոմիտե հիմնելու անհրաժեշտությունը հիմնավորելիս հարկավոր է նկարագրել դպրոցի աշխատակազմին (ղեկավար և վարչական անձնակազմ) այդ հայեցակարգի ներկայացումը, կոմիտեին հիմնումը, յուրաքանչյուրի համար սահմանված դերերը և պարտականությունները (և դրանք սահմանելու կարգը), ժողովների կազմակերպման հաճախականությունը, աղետներին պատրաստվածությանն ուղղված գործողությունների իրականացման համար հաստատված կարգը և այլն:

Վերոնշյալ գործընթացն ըստ հարկի փաստագրելու համար ծրագրի վերջին եռամսյակին նախորդող ժամանակահատվածում կարելի է դիմել խորհրդատուի ծառայություններին, որը կօգնի գտնել համապատասխան փորձի վրա հիմնված մմուշներ և քաղված դասեր: Հիշեք, որ դուք դեռևս պետք է փաստագրեք զխավոր գործընթացները, օրինակ՝ այցելությունների զեկույցներում և իրականացնող գործընկերներից ստացված զեկույցներում: Գործընթացը փաստագրելու արդյունքում կարելի է այնպիսի օգտակար փաստաթուղթ կազմել, որը կրթության և արտակարգ իրավիճակներին արձագանքելու ոլորտում քաղաքականություն ձևավորողների և որոշումներ կայացնողների, ինչպես նաև նվիրատուների և աղետների նվազեցման այլ շահառուների շրջանում ծրագիրը քարոզելու տեսակետից անգնահատելի արժանիք է հանդիսանում: Այս ամենը թույլ կտա հասկանալ պետական մակարդակով քաղաքականության և ռազմավարությունների մշակման կամ փոփոխման տեսակետից տեղում կազմակերպվող աշխատանքների նշանակությունը: Ի դեպ, հենց դա է եղել Եվրահանձնաժողովի մարդասիրական օգնության վարչության աղետներին պատրաստվածության ծրագրի սահմանած նպատակը: